

ԼՈՅՍ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը: Տարեկան գինն է մեկ յիրա օսմանեան: Մեկ քերթը 40 փարս. արծար: Նամակ կամ ո եւ է գրութիւն պետք է ուղղել: Ա. Ս. Գափամաճեան կուստանդ. նուպոյիս, Մերձան չարշի Բիշտի էֆէնտի խանի տակ Մ. Կ. Սարգեանի տպարանը:

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻԻ 116

1880

ՇՍ.ԲԱ.Թ 29 ՆՈՅՆՄԻՆԻ

Ա.Ո.Ս.ՋԱՐԿՈՒԹԻՒՆԻ

Մեր սկզբունքն է, և ինչպէս որ մեծարոյ ընթերցողք դիտած են թէ՛ մեք մեր ազգային պետքերուն վրայ խօսած և զանոնք թուած ատեն, բնաւ չեմք վարանիր պէտք եղած միջոյններն ալ առաջարկել, զիսնալով որ առանց զազոնք ցոյց տալու, մեր խորհրդածութիւններն ու անտութիւնները պէտք եղած օգուտը չեն արտադրեր և հետևաբար ուշադրութիւն չեն դրաւեր:

Բնաւ չեմք յաւակնիր ըսելու թէ մեր խորհրդածութիւնները բարձր առարկաներու կը վերաբերին, ու բարձր նիւթեր կը բացատրեն, ընդհակառակը՝ կը խոստովանիմք թէ խիստ պարզ նիւթերու կը վերաբերին. ժողովրդեան համար, ժողովրդեան լեզուով և ժողովրդեան պիտոյից նկատմամբ գրուած պարզ խորհրդածութիւններ են, սակայն գոհ եմք որ մեր յուսացածէն աւելի համակրութիւն կը դանեն և ուշադրութիւն կը գրաւեն:

Մանաւանդ այս վերջնով քաջալերեալ՝ կը շարունակեմք մեր ընթացքն, Հանդէսս հետզհետէ հասարակաց օգտակար ընելու փափաքանօք, որ մեր միակ իղձն է, որովհետև մեք ժողովրդեան մարդ վնեւով ժողովրդականութիւնը՝ բայց ճշմարիտ ու անկեղծ ժողովրդականութիւնը մեզի սկզբունք ընտրած եմք, որով պիտի քալեմք միշտ դժբախտ հրապարակին վրայ և մեր երեսփոխանական պարտաւորութեանը մէջ, ինչպէս որ հաւատարիմ մնացած եմք ցարդ մեր ըսկըզբանը:

Խիստ գոհ եմք նաև որ մեր դրածներն՝ ինչպէս հօս, նաև 'ի Տիգիս' որ կեդրոն է Ռուսահայոց, համակրական ընդունելութիւն կը գտնեն: Մշակ երբեմն իւր էջերուն մէջ կ'ընդունի և նոր բաժանորդագրութիւնք կուգան զմեզ քաջալերել:

Արդ, այսքան մը մեր գոհութիւնն ու շնորհակալիքն և մեր փոքրոգի նախանձօրդաց ալ միայն և եթ արհամարհանք յայտ-

նեկէ յետոյ՝ կը գառնամք մեր նիւթին , Առաւելապէս մեր պնդած կէտերուն մէկն է առաջնորդական խնդիրն , որուն վըրայ յաճախ գրեցինք , բացատրելով նորա մեծ կարևորութիւնն ու պաշտօնն՝ որ այնքան լքեալ է այժմ , և սակայն արժանի խորին ուշադրութեան , վասն զի առաջնորդն ամենայն ինչ է , և թէ արժանաւոր առաջնորդ մը ո՛րպիսի պատուական ուղղութիւն կարող է տալ իւր ժողովուրդին և ամբողջ գաւառ մը պտորաստել և վերականգնել :

Աւասիկ մեր կարևոր պէտքերուն գըլխաւորներէն մին , որուն վրայ իրաւամբ կ'արժէ որ լրջութեամբ խորհմք , ըստ որում՝ պարզ խօսքով առաջնորդն ուրիշ բան չէ , եթէ ոչ մեր կառուցանելիք ազգային շէնքին բանւորը :

Բանորն ըսինք , որովհետեւ շէնքն առանց բանորի չբարձրանար . ուստի մեր կառուցանելիք շէնքին բանւորը պատրաստեմք նախ և ազոր միջոցներուն վրայ խորհմք :

Այս կէտիս նկատմամբ երկու միջոց կ'առաջարկեմք :

Ա. Պօլսոյ մէջ բարձրագոյն կարգի վարժարան մը հաստատել , որ սահմանեալ լինի վարժապետ և առաջնորդ հասցնելու , որովհետեւ այս երկուքն ալ հաւասարապէս պէտք են , և շատ հարկաւոր է որ վերջինն հարկեղած ուսմանց հետ միանգամայն օրէնսդրութիւն և փաստաբանութիւն ուժնի , ըստ որում՝ առաջնորդի մը համար ասոնք անհրաժեշտ են , ինչպէս նաև անհրաժեշտ է կառավարելու ուսումն , որ առաջնորդական պաշտօնին պարտիքը կը սահմանէ :

Բ. Առաջնորդական ընտրութեան իրաւունքը գէթ ժամանակի մը համար կեդրոնին տալ .

Գ. Առաջնորդութեան վիճակը ներկայ անկեալ վիճակէն բարձրացնել , և եօթը գըլխաւոր գաւառապետ խնդրու , այն է , Տրա-

պիզնի , Կորնոյ , Վանոյ , Մշոյ , Տիգրանակերտի , Քար-բերդի և Երզնկայի մէջ արքեպիսկոպոսութիւն հաստատել՝ այդ պաշտօնն արժանագունից յանձնելով , միւս վիճակները նոցա իրաւասութեանն ենթարկելով , խիստ մերձաւոր գաւառները միացնելով և հետեալ պայմանները ներկայ թուականէն սկսեալ անհրաժեշտաբար գործադրելով և իբր ընդհանուր օրէնք հռչակելով :

1. Արքեպիսկոպոս առաջնորդի , եպիսկոպոս առաջնորդի և վարդապետ առաջնորդի պաշտօնավարութեան շրջանը երեք տարուան համար է :

Եթէ վիճակայինք ընդհանրապէս գոհ լինին , եթէ ծառայութիւնն , սահմանեալ պէտք է լինի ուրոյն հրահանգով) ակներով տեսնուի , և եթէ ո՛ր և է անբաստանութիւն մը չհաստատուի առաջնորդն երկրորդ անգամի համար ալ վերընտրելի կը լինին , իսկ երկրորդ շրջանէն ետեւ ուրիշ կարևոր վիճակ մը կը զրկուի :

2. Վարդապետ առաջնորդ մը եպիսկոպոսանալու իրաւունք չ'ստանար , եթէ գոնէ ամբողջ շրջանի մը մէջ արքեպիսկոպոսի մը իրաւասութեանը ներքե իւր պարտիքն անթերի չկատարէ :

3. Արքեպիսկոպոսական տիրոջն և պաշտօն չկրնար ընդունիլ եպիսկոպոս մը , եթէ գոնէ երկու գաւառի մէջ գոնէ երկու շրջան պաշտօն չվարէ ըստ արժանոյն :

4. Առաջնորդք , ըստ աստիճանի , ամսական թոշակ կ'ընդունին , զոր կը վճարէ գաւառին անտուկը :

5. Իւրաքանչիւր առաջնորդ իւր գործոցն համեմատ պատիժ և վարձատրութիւն կ'ընդունի :

Մեք այս կէտերն՝ իբրև կարևոր միջոցներ՝ կ'առաջարկեմք Ազգային Վարչութեան , աւելցնելով միանգամայն թէ յոյժ օգտակար կը լինի ամեն երեք տարին անգամ մը

այցելու քննիչներու միջոցաւ ընդհանուր գաւառաց վիճակը քննութեան ենթարկել և ամբաստանութեանց քննութիւնը՝ տեղական նախարանութենէ մը յետոյ՝ կեդրոնին մէջ երգուեալ գատաւարաց առջև կատարել հրատարակու :

Կը յուսամք թէ մեր այս պարզ և օգտակար առաջարկութիւններն ընդունելութիւն կը գտնեն յօգուտ և ի վերաշինութիւն Հայաստանի գաւառաց, որոց զէթ ներքին վիճակի բարւոքման խնդիրը պէտք է որ ազդակն լուրջ նկատուի թեան առնուի :

Աւասիկ մինչև հիմա իրաւամբ ստեղծ կրկնած և յաճախ ուշադրութիւն հրաւիրած մեր ներքին վերակազմութեանը վերաբերեալ խիստ կարճոր խնդիրներէն մին, որոյ ստիպողութիւնն անտեսելի է, և կարծեմք հարկ չկայ վերստին բացատրելու թէ առաջնորդն իրօք ի՛նչ է, ի՛նչ պէտք է լինի և թէ առաջնորդական սրբախի գրութիւն հաստատելու է :

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նոր գրութեան համեմատ կազմուած Վարչութիւնը թէպէտ տակաւին չհրատարակեց իւր հիմնադրին, որպէս զի կարենայինք գնահատել իւր հեռուելիք ընթացքն և ուղղութիւնը, սակայն գոհութեամբ կը տեսնեմք թէ իւր պաշտօնին ձեռնարկած և ազգային գործերը վարել սկսած է, որմէ կըրնամք հասկնալ թէ ազգային վարչութիւն մը ունիմք :

Իայց ինչպէս յայտնի է, խնդիրն ազգային վարչութիւն մ'ունենալուն վրայ չէ միայն, այլ ազգային ընդհանուր բաղձանաց համաձայն մեր էական պէտքերն հասկնալու, հոգալու և հեռուապէս ներքին վերակազմութեան հիմունքը դնելու անհրաժեշտ պարտականութեան վրայ է :

Ահա այս է որ կ'սպասուի մեր Ազգային Վարչութենէն, այս կը պահանջէ ժամանակն, այս կը պահանջէ մեր վիճակն ու կայութիւնն և այս կը պահանջէ ազգայն, որ ստուեր չէ, երազ չէ, այլ ներկային յաջողքն է :

Այս վերջին բացատրութիւնը բաւական է Ազգային Վարչութեան հասկցներու թէ սրբախի ահաւոր պատասխանատուութիւն մը ստանձնած է մանուանդ այնպիսի ժամանակ մը՝ յորում ԳՈՐԾ և դարձեալ ԳՈՐԾ պէտք է, և ոչ թէ խօսք, որոյ ժամանակն անցած է :

Մէք խիստ լուր կը ճանչնամք Խորհրդականաց իւրաքանչիւրին ազգասիրութիւնն ու արժանիքն և դիտեմք թէ ամենն ալ հասարակաց վստահութեանն ու յարգանայն արժանաւոր անձինք են. ուստի չեմք ուզեր երբէք իրենց անձնականութիւնը խնդրոյ նիւթ ընել :

Մեր խնդիրն իրենց պաշտօնին հետ է (ոչ այսօր), զոր պիտի քննադատեմք ամեն անգամ, երբ առիթ ներկայանայ, և տեսնեմք թէ ազգային ներքին կարևոր խնդիրներ անլոյժ և բարձի թողի կը մնան, ազոնց հիմնական կարգադրութեանն հօդ չտարուիք և հեռուաբար մեր ազգային վիճակը դէպ ի լաւն չընթանար :

Չայս ընելով մեք մեր հրատարակային պաշտօնին պարտականութիւնը կատարած կը լինիմք, ըստ որում հրատարակային գրչի մը պարտաւորութիւնն է հսկել ազգային շահուց և իրաւանց անվթար պահպանութեանը, քննադատել ազգային վարչութեան և համայն պաշտօնէից պաշտօնական արարքն, ի վեր հանել և դատապարտել այն ամենայն ղեղձում, որ այս կամ այն պաշտօնէին ձեռքով կը գործուին և որք բարուց ապականութիւն յառաջ կը բերեն, և վերջապէս ջնտրել երբէք որպէս զի օրինաւորութեան փոխա-


նակ՝ անձնական հաճոյք, արդարութեան փոխանակ՝ մասնաւորաց կամք և իրաւանց փոխանակ աչառութիւն տիրէ :

Գոնէ մեք մեր պարտականութիւնն այս սահմանին մէջ կ'ըմբռնեմք, համոզուած լինելով թէ ազատ մամուլը սահմանադրական վարչութեան մը շարժիչ զօրութիւնն ու հակաշիւնն է :

Մեր այս հրատարակային պարտականութիւնն այժմ՝ ամեն ժամանակէ աւելի փութաջանութեամբ 'ի դործ պիտի դնեմք, որովհետև նախ որ մեր ազգային ներքին գործոց ծանր վիճակն այնպէս կը պահանջէ, և երկրորդ որ՝ մեր մէջ վարչական նոր դրութիւնն, որոյ օգտակարութիւնն ամեն քաղաքակրթեալ երկիրներու մէջ փորձով ճանչուած և հռչակուած է, չպիտի կրնամք ներել որպէս զի անձերու զոհ երթայ :

Մեր մէջ մինչև հիմա անձերը դրութեան զոհ կ'երթային, այժմ՝ ալ պէտք չէ որ դրութիւնն անձերու զոհ երթայ :

Ուստի իւրաքանչիւրին յարմարութիւնն ու արժանաւորութիւնն իր գործքերէն պիտի գնահատեմք :



ՍՍՈՅ ԿԱՔՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Որովհետև ազգային ներքին վիճակի վրայ կը գրեմք և բարեկարգական խնդրոց վրայ կը խօսեմք, հարկ է որ ուշադրութեան առնումը հասկնալու համար թէ Սոյ Ս. Կաթողիկոսն ինչո՞ւ և ի՞նչ պատճառաւ Պօլիս եկած է :

Այսպիսի խնդիր մը խիստ կարևոր է մանաւանդ անոր համար որ բուսական տեսէն 'ի վեր Կիլիկիոյ վիճակը խնդրոց նիւթ եղած և ամեն ազգասիրաց ուշադրութեանն առարկայ դարձած է :

Մեր քաղած ստոյգ տեղեկութեանց նայելով՝ Սոյ Ս. Կաթողիկոսը Կիլիկիոյ կաթողիկոսան խընդրոց կարգադրութեանն համար Պօլիս եկեր է, որպէս զի Ազգային Արքայութեան հետ անձամբ բա-

նակցելով և երկու կողմէն ալ խնդիրն օրինաւոր լուծում մ'ստանայ :

Կարծեմք ժամանակ է որ Սոյ կաթողիկոսն անվերջանալի խնդրոցն այլ ևս վախճան արուի, կաթողիկոսական իրաւասութեան սահմանը գծուի, և բարձաին այն կրճիմներն՝ որք Կիլիկիոյ բազմահոյ վիճակոց այնքան մեծ և ահագին վնաս պատճառեցին :

Հարկ անհրաժեշտ է որ այս կեանք լուրջ ուշադրութեան առնուի, որով աւելի ուշ կ'ուտան այն պարագաներն ու մեքենայութիւններն, որ արտարուտ կան և 'ի դործ կը գրուին անգագար անդ Հայութիւնը մետաբու և նորա աղբեցութիւնը բեկանելու, որուն համար այնքան ջանքեր կը լինին և մեծ ճիգեր կը թափուին, և սակայն կարծես Ազգն անտեղեակ է այս ամեն անցքերէն և իրողութիւններէն, որ բնաւ տարակոյս չեն վերջեր :

Արդ, եթէ հարկ է որ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կանգուն մնայ և իւր նշանակութիւնն ստանայ, ինչպէս որ պէտք է, անհրաժեշտ է որեւէ որ Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրն ալ իր օրինաւոր լուծումն ստանայ :

Քաղաքական տեսութեամբ և ազգային բարձր շահերու առջև Կիլիկիոյ կաթողիկոսութեան գոյութիւնն ու արժանաւոր դիրքի մը վերածուիլն աւելնարձարձակ հարկ մ'է, մանաւանդ սա տեսութեամբ որ Սիան էջմիածնայ համար հարկաւոր է :

Ձեւք ու բանար թէ Կիլիկիոյ վիճակն այսօր անհանդուրժելի է, չեմք ուրանար թէ անդ հիմնական բարեկարգութիւն հարկաւոր է, չեմք ուրանար նաև թէ՛ անդ անովջական ազդու դարձաններ և տրագ զործողութիւններ պէտք է 'ի դործ դրուին, բայց այս ամենը փութով կատարելուն հետ պէտք է նաև լուրջ կերպիւ գննութեան առնուլ և հասկնալ այն զօրաւոր պատճառներն, որ մինչև հիմա այս ամենն ընելու արգելք եղեր են, եթէ երբէք ըստուգիւ կան այնպիսի արգելիչ պատճառներ :

Ձայս ընելն էական պէտք մ'է, ըստ որում օրինադրելու համար քննութիւն հարկաւոր է, որովհետև նորը և կիրթ ճաշակի յարմար գեղեցիկ օրէնքները չեն որ շատ անգամ օգտակար կը լինին, այլ այն օրէնքներն՝ որ ժողովրդեան պիտոյից, կայութեանը, վիճակին, տեղական հանգամանաց և պարագայից յարմար շինուած և դորձադրութեան դրուած են :

Ասկէ զաս՝ օրինադրողին միտքն ըստ ամենայ-

նի պէտք է անկախ լինի և միայն ազգային բարձր շահեր և սպառնալիքներով ի նկատ առնու :

Ներկան տարագային զոհելը կրնամք հասկնալ , բայց սպառնալիքներով զոհելը պէտք է որ հասկնալն անմիջ երբէք :

Արդ , այս ամենայն տեսութիւն , որ իրայ վիճակը խիստ կենդանի դրոշմերով կը բացատրէ , կը յուսամք թէ զրգիւ մը կը լինի մեր Ազգային Վարչութեան՝ արժանաւոր լուծում մը ձեռք բերելու Այլիկից կաթողիկոսական խնդրոյ և Այլիկեան վիճակոյ մասին , որ ամեն Հոյու մասնութեանն իրաւամբ արժանի եղած է :

Փանդասիլը լուսաւորելն բաղձալու միջոց մ'է , եթէ միայն լոկ սրբատոնական փախար մը չլինի և եթէ ազգ մ'իւր բաղձանայն հասնելու բանաւոր միջոցներն ի դարձ դնէ :

Ուրեմն իրաւունք չունիմք ըսելու թէ ԳՈՐԾ և զարձեալ ԳՈՐԾ ԳԵՏԲ է :

ԻՆԻՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Արտեւր թէ գաւառոց մէջ ինքնապաշտպանութեան սղին այս միջոցիս արթնցած է չիչ շատ , և իբր օրինակ մի քանի դէպքեր յառաջ կը բերուէին :

Մեր կարող եմք համարձակ պաշտպանել ինքնապաշտպանութիւնն , որ հարկ մ'է մանաւանդ հոն՝ որ աստիկան զինուորութիւն չկայ , որպէս զի կարենայ հասարակաց կեանքն , ինչքն ու ապահովութիւնը պաշտպանել ընդդէմ յարձակմանց , որք վայրաղ և խուժուժ ցեղերու կողմէ մերթնդներթի ի գործ կը դրան խողալ , աշխատակր և երկրին օգտակար ժողովրդոց վրայ :

Ինքնապաշտպանութիւնն ոյնպիսի իրաւունք մ'է , զոր ոչ ոք կրնայ արգելու և յանցանք կամ եղեան համարիլ այնպիսի պարագայից մէջ , յորում մարդ ինքզինք և իր ընտանեաց կեանքը պաշտպանելու համար իրմէ զատ ուրիշ պաշտպանութեան միջոց չունի :

Քաղաքացի մէջ և հոն՝ որ իշխանութիւն և հասարակաց սպառնութեանն հսկող ստիկան զինուորութիւն կայ , դէնք կրեն օրինօք արգելուած է իսկ հոն՝ որ չկայ ազնոյմէ մին (որովհետեւ տէրութիւնը բնականաբար չկրնար ամեն տեղ և դիւղերու մէջ ջորք պահպանել) , անդ իր կենաց , զոյցի և

ընտանեաց պաշտպանութեանն համար ինքնապաշտպանութիւնն օրինօք արգելուած չէ , և հետեւաբար ինչ որ օրինօք արգելուած չէ , յանցանք չէ :

Իրաւագիտական սկզբունք մ'է այս , զոր ոչ ոք կրնայ ժխտել :

Բայց ամենն այսքան չէ : Ինքնապաշտպանութիւնը մարդուս ազատ սպրեւը , այն է , խուժուժ մարդոց զոհ չլինելու իրաւունքն բոլորած է :

Արդ , ինչպէս ազատ է մարդ իր ուղած արհեստը բանելու , աշխատութեամբ դրամ շահելու , ընկերութեան մէջ սրատուաւոր դիրք մը ձեռք բերելու , ամուսնանալու ընտանեաց հոյր լինելու , քուէ տալու , ընտրելի լինելու և վերջապէս ամեն տեսակ քաղաքացի իրաւունքներ վայելելու , այսպէս ալ հարկ եղած տեղն ինքնապաշտպանութեան իրաւունք ունի :

Այս իրաւունքն ալ արդէն օրինօք նուիրագործեալ է :

Մեր այս խնդրոյն վրայ սակէ առաջ ալ գրած և իբր միջոց՝ ստաջարկած էինք գիւղերու մէջ հրակող սրահապաններ հաստատել :

Գիւղականք այսպիսի բանաւոր միջոց մ'իջործ դնելով թէ իրենց գոյութիւնն ու իրաւունքը պահպանած և թէ առ տէրութիւնն ալ թանկագին ծառայութիւն մը մատուցած կը լինին :

Տէրութեան լաւ ծառայելն ամեն անհատի անհանձնելի պարտականութիւնն է , և արախ եւք յոյժ որ տալիս կունենամք տէրութեան արդար բաղձանքներն ու արդար օրէնքները ժողովուրդին բացատրելով՝ մեր խթադրական պարտականութիւնն , ինչպէս որ պէտք է , կատարած կը լինիմք :

ՀԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Մեր այս կէտին նկատմամբ սակէ առաջ ընդարձակ կերպիւ գրած և յոյց տուած եմք թէ համարաւորութիւնն անկապտելի իրաւունք մ'է :

Այսօր դարձեալ չեմք ուղեր ինչոյն անդրադառնալ և կրկնել մեր գրածն , ալ սխտի խօսիմք այնպիսի խնդրոյ մը որ թէպէտ նոյն սկզբունքին կը վերաբերի , բայց իրողութեան մը վրայ կը դառնայ :

Գեր. Խորէն Նար—Պէյ Լուսինեան Արազան աղբային արտոնիրակութեան արաշտօնով Պաշկարիս , Բուսնիս և Աւարո—Հունկարսկան սահմանները գնաց , շրջեցաւ ամենուրեք , խիստ արաւուաւոր ընդունելութիւններ գտաւ , իրազրաց մէջ իւր ա-

նունն յաճախ գրուեցաւ , և իւր պաշտօնն աւարտած՝ այժմ՝ հաս կը դանտի :

Բայց բուն խնդիրն այն է թէ Ն. Սրբազնութիւնն ինչ տեսաւ իւր այցելած տեղերն , ազգայնոց վիճակն սրախի գրութեան մէջ գտաւ , ինչ գործեց և ինչ ըրաւ :

Ասոնց ասեմը գիտնալն Ազգին իրաւունքն է . զոր պէտք է վայելի , սրովեալ ինչ օգուտ կանեանայ բննիչ կամ պատուիրակի գրկելն , եթէ նոցա պաշտօնին համարը չարահանջուի և եթէ Ազգն իր համարաութեան իրաւունքն ի գործ չդնէ :

Մեր կը փափարի՞ր և կուտայրի՞մք որ Ն. Սրբազնութիւնն իր սրտածնամբարութեան տեղեկաւ գիրը մատուցանէ առ որ անկ է , և միտնգամայն հրատարակութեան տայ , սրաչա զի կարենամք զընտանաւել իւր գործոց արդիւնքն և իրողութեամբ համագոյլ թէ Ն. Սրբազնութիւնն իր պաշտօնը զուհայուցիչ կերպիւ կատարած է , կամ ոչ :

Այս յոստմը թէ Ն. Սրբազնութիւնը կը հաւտնի մեր այս առաջարկութեան և հետեւաբար ընդհուպ կատարել կը բարեհաճի :

Ք Ա Ջ Ա Լ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մասիսի միամեսայ դադարումը ծանուցանելու առթիւ քանի մը տող գրելով յորդոր և հրաւեր կարգացինք նորա խմբագրին այս պատճառաւ ծագած փաստը թեթեւցնելու համար հանդանակութեան մը ձեռնարկել ազգային դրականութեան այս անխոնջ և բազմավատտակ մշակը քաջարեքեքով :

Գոհութեամբ կը տեղեկանամք թէ մեր այս ակնկալութիւնն ու հրաւերն ի դերիւ չէ ելած , որովհետեւ հանդանակութեան ձեռնարկուեր է , և կը յուսամք թէ ի քաջալերութիւն՝ գոհացուցիչ արդիւնք մը կ'ունենայ :

Հանդանակութեան գլուխ կեցող պատուարժան ազգայինոց անուանքն ու պարագաները կը խոստանամք յաջորդ թուով մանրամասնաբար հրատարակել :

Գոհութեամբ կը տեղեկանամք նաև թէ Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնն հինգշաբթի աւուր նստին մէջ սրտչեր է իդական սեռէն ի նեոաստ Մասիսի հանդանակութեան ձեռնարկել :

Ա Ռ Մ Ա Ն Ջ Ո Ի Մ Է

Հայկական խնդիրը գազանիք մը չէր ըսելիս ձեզի դարմանալի թուեր է .

Ինչո՞ւ կը դարմանաք , բարեկամ , երբ և ո՞վ կ'ըսէ թէ գազանիք է . ոչ Ամեն Ս. Պատրիարքն այնպիսի բան մ'ըրած է , ոչ Ազգ. Ժողովն և ոչ մեք : Մարջն դուք չըսեմ ուրիշ կերպով , թիւրիմացութեամբ գազանիք կարծելով և իրր թէ խորին քաղցրիտեք երևան հանել փորձելով անել բաւզի մը մէջ ինկաք և հետեւաբար Ազգին հակակրութիւնն ի ձեզ հրաւիրեցիք :

Իսկ դո՞հ եմք այժմ որ նոյն ճանքէն դառնալով ձեր սխալը կը խոստովանիք և հրապարակաւ ներում կը խնդրէք Ազգէն :

Ազգը վեհանձնաբար կը ներքէ ձեզի և փտահ եղիք թէ պատարաստ է նուիրել ձեզ դարձեալ իւր օժանդակութիւնն , որովհետեւ անկեալին հետ անյիշատարութեամբ վարուիլը վեհանձնութիւն կը համարի , մանաւանդ երբ կը ճանչէ նա իւր սխալն և հրապարակաւ ներում կը խնդրէ :

Ուստի մեք ևս ձեզի հետ մեր հաշիւը փակելով կը հրաւիրեմք մեր պատուարժան ազգայիններն , որպէս զի փութան նուիրել վերստին առ ձեզ իրենց համակրութիւնն ու օժանդակութիւնն , որ ընկերսիրական քաղցր պարտաւորութիւնն է :

Զ Ր Ո Յ Յ

Վերջին օրերս զբոյց մը ելած է, որպէս թէ Ազգային ժողովն և կամ նորա մէկ մասը տրամադիր կը գտնուի եղեր Ամեն.Ս.Պատրիարք Հօր հրաժարականն ընդունելու կամ նորա հրաժարումը փութացնելու:

Մեք որչափ որ կրնայինք, ամեն միջոց ՚ի գործ դրինք ստուգելու համար թէ իրաւարդեօք այնպիսի դիտաւորութիւն մը կայ:

Այժմ կրնամք ասպնջով պէս հաստատել թէ այնպիսի խնդիր մը չկայ երբէք, և ատրակոյս չկայ թէ պէտք չէ որ կենայ վաստն զի այսպիսի փափուկ ժամանակի մը մէջ պատրիարքական խնդիր յարուցանելն՝ ամեն խելահաս անձ կրնայ գատել թէ Ազգին համար օրջան մնաստկար է. որովհետեւ բոլորովն մեր ազգային շահուց կը մնասէ:

Ազգն ամեն ժամանակէ աւելի մանաւանդ այժմ խաղաղութեան պէտք ունի, որովհետեւ իր ներքին էական խնդիրներովն զբաղելու համար խաղաղութիւն պէտք է, և ասոր հակառակ՝ ներքին երկպառակութիւնն յոյժ մնատակար է մեզի և թէ վտանգաւոր:

Ուստի անանք որ այս տեսակ անհիմն զբոյցներ հրատարակելու մէջ մասնաւոր շահ ունին, պէտք է զիտնան թէ սուտ ու սխալ լուրեր շրջաբերութեան հանելով՝ Ազգին կը մնասեն:

Նոյն իսկ Փափաղեան էֆէնտի, որոյ նկատմամբ ասրբեր կարծիքներ կան, երէկուան Ազգային ժողովոյ մէջ կը յայտարարէր թէ իւր հարցապնդումովն երբէք նպատակ չունի զՍ. Պատրիարքն ամբաստանել:

Մեք չեմք գիտեր թէ յիշեալ զբոյցին հեղինակներն հասարակաց օգտին և շահուն առջև ինչո՞ւ չեն ուղեր հարկ եղած զոհողութիւնն ընել և ընդհակառակը՝ կելլեն պզտոր ջուրի մէջ ձուկ որսալու:

Մեք օրջափ կարելի է, ներքին ուժ:

պէս վէճեր և սոսկ անձնական կուտակցութիւններ յարուցանելէ զգուշանալու և միմիայն մեր ազգային էական և անհրաժեշտ պէտքերովն զբաղելու և պարագաներէ օգուտ քաղելու վիճակի մէջ գտնուելու եմք:

Արդ, պէտք է չորս բանամք աչքնընկիւ և տեսնեմք թէ մեր շուրջն ի՞նչեր կը դառնան և օրպիտի մեքենայութիւնք ՚ի գործ կը դրուին:

Պատրիարքական փոփոխութենէ օգուտ սպասելն խելացի գործ չէ:

Կը յուսամք թէ կրցինք լաւ բացատրել:

Լ Ս Ա Ր Ա Ն

ԳՊՐՈՅ. ՀԱՅՈՒՋՆԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՊՕԼՍՈՅ ՄԱՍՆԱՃԻՎԻՆ

Նոյ. 30 Կէրտի ցերեկ ժամը 7 1/2

Ի ՄԱՅՐ ՎԱՐՃԱՐԱՆ ՊԷՋՃԵԱՆ ԳՈՒՄԳԱՐՈՒ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ռ. ԷՅԷՆՏԻ ՊԷՐՊԵՐԵԱՆԻ

Ն Ի Թ

ՊՏՈՅՏ ՄԻ ԳԱՂԱՓՍՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՉ

Մ ու տ ք 2 շրուշ

Սոյն ատենաբանութիւնը որ իւսկիւտարի կը թատիրաց ընկերութեան լսարանին մէջ խօսուած է ի գոհունակութիւն հանդիսակաւնաց, Գօլոյ հասարակութեան կողմանէ ևս խնդրուած է: Ուստի կը խնդրուի ընկերութեանս յառաջդիմութեան փափաքող ազգայիններէ նոյնպէս տիկիւններէ որ իրենց ներկայութեամբը պատուեն սոյն լսարանը:

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Վախճանեալ Սրապեան Պաղտասար աղայի գրավաճառութեան խանութն, որ ի Մէրճան չարչը թիւ 33, Աշճեան Պ. Յովհանի անցած ըլլալով, կը ծանուցանէ թէ ամեն տեսակ գրքեր կը ծախուին յիշեալ խանութըն, ուր և դպրոցական պիտոյից վերաբերեալ ամեն տեսակ յանձնարարութիւնք ևս կընդունուին:

5-2

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀՈՉԱԿԱՒՈՐ ՈՃԻՐՔ

ՍԷՆ ԺԷՐԱՆ ԿՈՄՍՈՒՀԻՆ

Հեղինակ ԱՂԵՔՍԱՆԴԻՐ ՏԻՄԱ
Թարգմանիչ Մ. Յ. Մէլիքեան
Հրատարակիչ Ս. Ղ. Պարբիչյանեան

Սոյն հետաքրքրական պատմութիւնը Հայրենիքի խմբագիր Մ. Յ. Մէլիքեան էֆէնտիի թարգմանութեամբ 'ի լոյս ընծայեալ ըլլալով, կը ծախուի Ս. Ղուկասեանի գրատունը և ուրիշ գրավաճառաց քով ի գին 6 ղրուշ:

ՄԵԾՍՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ

Գրեց Յ. Յ. Պարսնեան

Հրատարակիչ Ս. Ղ. Պարբիչյանեան

Ազգային ժամանակակից վէպ մ'է, որ տետր առ տետր սկսած է հրատարակուիլ, երրորդ տետրը ի լոյս ընծայուած ըլլալով, կը ծախուի գրավաճառ Ս. Ղուկասեան և Ֆրէնկեան գրատունները, սուճի Պօղոս աղայի խանութը և լրագրավաճառներու քով ի գին 40 փարսյ:

ԸՆԴԱՐՉԱԿ ՕՐԱՑՈՅՑ

1 8 8 1

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԴԻՆ 100 ՓԱՐՍ.

ՅՕՐԻՆԵԼ ՅԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԷ ԽԱՍԳԻԻՂԻ

Ս Ե Պ Հ Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ս. ՓՐԿՉԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՎՄԵԱՆ

Պարսնակալիւն

Վիճակագիր տէրութեանց. — Հայրապետութիւն Հայոց. — Հայաստան ազգաբնիկ կամ Արմենիա. — Օսմանեան միջազգային թղթատարութիւնք. — Ժամանակացոյց սուրհանդակաց Օսմանեան միջազգային թղթատարութեանց. — Եւրոպական նամակատունք ի Կ. Պօլիս. — Յուցակ դնոց թղթատարութեանց և հեռագրութեանց Եւրոպական Ասիական քաղաքաց թուրքիոյ. — Սակագրհեռագրի ըստ նոր կարգադրութեանց միջազգային թելերու. — Ընկերութիւնք շոգչարժ նաւարկութեան. ինչպէս են, Եգիպտական (Խտիվիյէ), — Մախսուտէ. — Աւստրո-Հունգար Լոյս. — Մէտաժըրի Մարիթիմ. — Բաքէ Էնէ և ընկերութիւն. — Ռուսական ընկերութիւն. — Ընտանեկան գեղարան:

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ
Հ. Ե. ԴԻՄԱՔՍԵԱՆ Մ. ՎԱՓԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՔԱՏԷԼ ՍԱՐՇԵԱՆ
Մէրճան չարչի Ռիչտի էֆ. խանի տակ թիւ 20